չեւ Նորին Բարձրութեան գնալը արդէն մաղթանք էին կատարում հոգեւորականները երկար կենաց և բաղդաւորութեան համար Նորին Կայսերական Բարձրութեան. մզկիթից գնաց բերդը և 16 ժամ Դարբանդում մնալուց յետոյ՝ այն է 17ին հոկտմ. գնաց ամրոցները Դիլդ Լագիր անունով. գնալուց յետոյ իսկոյն գեներալ մայեոր Մինգվիցը բաժանեց աղքատ դասակարգին շնորհուած Նորին Բարձրութիւնից նշանաւոր գումար։ Ես՝ անպիտան ծառայս Աստուծոյ՝ ժառանգին տեսութեան միջոց երգեցի յետագայ նախադասութիւնը։ Այո՛, Աստուած երկարացնի կեանքը թագաւորին թագաւորաց, տարածի նորա շուքը աշխարհի վերայ. զօրանայ յաւիտեանս նորա կարող բաղդը և խոնարհին նորա թշնամիք և բարօրութիւն լինի Նորին Բարձրութեան, որին տայ Աստուած տիրել աշխարհին. ես ի խորոց սրտի երգում եմ նրան օրհնութիւնս, քանզի ես նրա դռան ծառայն եմ։

Միրզա Խաիր Վէզիրով Դարբանդցի. 1850 ամի։